

ՔԵՍԲԵՐՈՒՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՎԵՐՈՎ
ԴԱՍԱԽՈՄՆԵՐԻ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՁԵԿՈՒՅՑԻ ՆՅՈՒԹԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՍՀՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՊՐՈՖ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՔԵՍԲԵՐՈՒՄ - 31.10.2017

Հարգարժան պարոն դեկան,

Հանրային իրավունքի կենտրոնի հարգարժան պարոն նախագահ,

Հարգելի ներկաներ,

Շնորհակալություն եմ հայտնում, որ ինձ հնարավորություն ընձեռվեց միջազգային բարձր հեղինակություն ունեցող Ձեր համալսարանում ներկայացնել որոշ նկատառումներ վերափոխվող հասարակական համակարգերում սահմանադրական զարգացումների վերաբերյալ:

Որպես անմիջական մասնակից այդ բոլոր գործընթացների, կփորձեմ ոչ միայն ակադեմիական ընդհանրացումներով, այլև կոնկրետ վերլուծության հիման վրա Ձեզ ներկայացնել նոր ժողովրդավարության երկրներում սահմանադրական զարգացումների ընդհանուր միտումներն ու առկա մարտահրավերները:

Զեկույցս կբաժանեմ երկու մասին: **Առաջին մասում** կանդրադառնամ սահմանադրական զարգացումների ընդհանուր միտումներին ու հիմնախնդիրներին Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներում: **Երկրորդ մասը** կվերաբերի Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումներին ու սահմանադրական արդարադատության պրակտիկային:

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՍՀՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

3

ՄԱՍ - I.
25 ՏԱՐԻՆԵՐԻ ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

1990-ական թվականներին Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ շուրջ 29 երկրներում հեղափոխական ալիքի վրա ընթացող սահմանադրական գործընթացների հիմնական բնութագրիչներն էին.

- նրանք արժեհամակարգային վերափոխման խնդիր պետք է լուծեին՝ հասարակական երկրաշարժի պայմաններում,

- նրանք ազատվում էին տոտալիտարիզմից ժողովրդավարական անհրաժեշտ ու բավարար միջավայրի եւ մշակույթի բացակայության պայմաններում,

- լիբերալ ժողովրդավարության հաստատման համար դեռեւս առկա չէին անհրաժեշտ իրավական ու կառուցակարգային երաշխիքներ,

- սահմանադրական ինքնության ձեւավորումն ու ամրապնդումը դարձան անցումային երկրների առանցքային խնդիրներից մեկը, ինչը մինչեւ այժմ պահպանում է իր հրատապությունը:

Հատկապես նախկին ԽՍՀՄ տարածքի երկրների բնակիչները պահպանելով իրենց ազգային ինքնության որակները, սահմանադրական ինքնության անհրաժեշտ որակներ ձեռք չէին բերել: Սահմանադրական ինքնության հիմքը պետության քաղաքացի լինելն է՝ քաղաքացու համար անհրաժեշտ ու բավարար որակներով: Վերջինս, իր հերթին, սոցիալական որակների մի ամբողջություն է, որի միջուկն են կազմում մարդու իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները, որոնք տոտալիտարիզմի պայմաններում ձեւական բնույթ էին կրում: Ուստի սահմանադրական ինքնության ամրապնդումն անցումային երկրների համար առանցքային նշանակություն ձեռք բերեց:

Այդ երկրներում պատկերը միատարր չէր: Սակայն հիմնական բնութագրիչը առերեսույթ ձգտումն էր տոտալիտարիզմից անցումը ժողովրդավարության: Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ էր համապատասխան սահմանադրական երաշխիքներ ստեղծել:

Այդ տարիների գիտական միտքը տարակուսանքի առջեւ էր՝ սկսել նոր սահմանադրությունների ընդունումից, թե այն իրականացնել արժեհամակարգային որոշակի կայունությունից հետո: Շատերը սվինների վրա ընդունեցին հունգարացի հայտնի սահմանադրագետ Անդրաշ Շաոյի այն միտքը, ով ընդգծելու համար Հունգարիայում նոր մոտեցումների եւ հին մտածողության հակասականությունը, բանաձեւեց. «Սոցիալական իրավունքներ գումարած սահմանադրական դատարան հավասար է զարգացած սոցիալիզմի»:

Ինչեւէ, տարբեր երկրներ որդեգրեցին սահմանադրական զարգացումների տարբեր մոտեցումներ: Դրանով հանդերձ, վերափոխվող հասարակական համակարգերում արձանագրվեցին սահմանադրական զարգացումների հետեւյալ բնորոշ առանձնահատկությունները.

1. դրանք տեղի ունեցան արժեհամակարգային անորոշության, անցումային շրջանին բնորոշ անկայունության, սահմանադրական կայուն ավանդույթների բացակայության պայմաններում,

2. գերակշիռ դեր ունեցան մոդելային սահմանադրական լուծումների որդեգրումը, այս կամ այն երկրին նմանակումը, ինչը հանգեցրեց արժեքային տրանսպլանտացիայի՝ դրա բոլոր բացասական դրսեւորումներով,

3. սահմանադրական զարգացումների հիմքում հեղափոխական էնտուզիազմն էր, ինչը հետագայում աստիճանաբար իր տեղը զիջեց սուբյեկտիվ պրագմատիզմին,

4. չէր երաշխավորված սահմանադրական լուծումների համակարգային ամբողջականությունը, շեշտադրումներն ունեին բարդույթավորված բնույթ՝ անցյալը ժխտելու եւ դրա վերադարձը թույլ չտալու միտում,

5. այս երկրներում լուրջ խզում էր առկա ընդօրինակված սահմանադրական արժեքանության եւ երկրում իրական սահմանադրական մշակույթի մակարդակի միջեւ, ակնհայտ էր սահմանադրականության լուրջ դեֆիցիտը, ինչը գնալով խորացման միտում էր դրսեւորում,

6. հետագա սահմանադրական զարգացումների վրա իրենց բացասական ազդեցությունն ունեցան քաղաքական համակարգի անկատարությունը եւ քաղաքական մշակույթի ցածր մակարդակը,

7. աստիճանաբար տեղի ունեցավ քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճում, դրա հետեւանքով՝ իշխանության օլիգարխիզացիա, ինչը խաթարեց իշխանությունների բաժանման ու հավասարակշռման փխրուն համակարգը,

8. սահմանադրական լուծումների համակարգային անկատարությունը պարարտ հող ստեղծեց գործադիր իշխանության դերի անհավասարակշիռ մեծացման ու կոռուպցիայի ծաղկման համար,

9. ժողովրդավարական նոր ինստիտուտների կայացման ու ինքնահաստատման տեմպերն էապես հետ մնացին հիշյալ միտումներից: Այդ ինստիտուտները հայտնվեցին հալածվողի դերում: Դա հատկապես վերաբերեց սահմանադրական դատարաններին /Հունգարիայում, Սլովակիայում, Ուկրաինայում, Լեհաստանում, Վրաստանում, Հայաստանում ու մի շարք այլ երկրներում/,

10. համակարգային անկատարությունը հանգեցրեց սահմանադրությունների հաճախակի փոփոխության՝ հիմնականում քաղաքական նպատակահարմարությունից էլնելով, ինչը չապահովեց ժողովրդավարական կայուն զարգացումների անհրաժեշտ միտում: Հակառակը՝ բացասական զարգացումների համար առավել պարարտ հող ստեղծվեց,

11. աչքաթող արվեց սահմանադրական այնպիսի կարելուր ինստիտուտների հստակ կանոնակարգումը, ինչպիսիք էին հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորումը, սահմանադրական պատասխանատվության սահմանադրական երաշխիքների ամրագրումը, սահմանադրությունների էվոլյուցիոն զարգացման երաշխավորումը, իրավական որոշակիության ապահովումը, հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության երաշխավորումը եւ այլն:

Նշված հիմնական բնութագրիչներն իրենց արտացոլումը գտան նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված զեկույցներում: Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը /Վենետիկի հանձնաժողով/, որի անդամ եմ 1997 թվականից, իսկ 2006 թվականից՝ նաև այդ Հանձնաժողովի բյուրոյի անդամ, 1991 թվականից սկսյալ քննարկման առարկա է դարձրել սահմանադրական զարգացումների գործընթացը հասարակական տրանսֆորմացիայի փուլում գտնվող բոլոր երկրներում: Քննարկումների առանցքային խնդիրներն են եղել.

- իշխանությունների տարանջատումն ու հավասարակշռումը,
- իրավունքի գերակայության երաշխավորումը,
- սահմանադրական արդարադատության համակարգային զարգացումը,
- անկախ դատական համակարգի կայացումը,
- ընտրական համակարգերի բարեփոխումը,
- տեղական ինքնակառավարման ամրապնդումը,
- մամուլի ազատության երաշխավորումը,
- ժողովրդավարական ինստիտուտների կայացման իրավական նախադրյալների ամրապնդումը:

Այս տարիներին Հանձնաժողովը սահմանադրական զարգացումների հետընթաց է գրանցել բազմաթիվ երկրներում: Մասնավորապես, վերջին տարիներին այն ակնհայտ է Հունգարիայում, Լեհաստանում, Սլովակիայում, Թուրքիայում, Ռումինիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ադրբեջանում:

Հետընթացը հիմնականում վերաբերում է.

իշխանությունների ոչ բավարար հավասարակշռությանը,

- ընտրական համակարգերին,

- դատական իշխանության ոչ բավարար անկախությանը,

- սահմանադրական դատարանների գործունեությունը խոչընդոտելուն,

- իրավունքի գերակայության երաշխավորման հարցերում ոչ հետետղական մոտեցումներին:

Ընդհանրապես անցումային երկրներում սահմանադրական զարգացումները, ելնելով ձեւավորված իրողություններից, կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի /*մեր ուսումնասիրման առարկան կլինի ոչ այնքան Սահմանադրության բուն տեքստը, որքան իրական կյանքում սահմանադրական արժեքների, սկզբունքների ու նորմերի կոնկրետ դրսևորումները*:/:


Առաջին փուլը ներառում է մինչև 2005-2008 թվականները: Այս տարիներին ժողովրդավարական զարգացումների հիմնական դրոշակակիրներ էին Հունգարիան, Լեհաստանը, Չեխիան, Սլովակիան, Սլովենիան: Պատահական չէր, որ նրանք առաջիններից դարձան Եվրոպական միության անդամ:

Այս տարիներին բնորոշ էին, մի կողմից` հեղափոխական պաթոսը եւ արագ ժողովրդավարացման մղումը, մյուս կողմից` համակարգային անկատարությունը եւ սուբյեկտիվ գործոնի մեծ դերը: Վերափոխումները հիմնականում իրականացնում էին հեղափոխականորեն տրամադրված քաղաքական ուժերը:

Սակայն փխրուն ժողովրդավարության ընձեռած ազատություններից հմուտ ձեռով օգտվեցին նաեւ, այսպես կոչված, քաղաքական բիզնեսի, նորաթուխ օլիգարխիայի ներկայացուցիչները, ովքեր կարելուք դեր ունենալով նաեւ սեփականության վերաբաշխման հարցերում, կարճ ժամանակահատվածում ապահովեցին քաղաքական ու տնտեսական ներուժի սերտաճում եւ ամրապնդեցին իրենց քաղաքական իշխանությունը:


Սահմանադրական զարգացումների երկրորդ փուլն սկսվում է **2008-ից հետո**, երբ անցումային շատ երկրներում քաղաքական ինստիտուտները սերտաճեցին տնտեսական մենիշխանության հետ եւ պարարտ հող ստեղծեցին քաղաքականությունը բիզնեսի վերածելու համար: Բնականաբար, այս բաժանումը պայմանական է, քանի որ տարբեր երկրներում տվյալ երեւույթները դրսևորվել են տարբեր խորությամբ, ավելի վաղ կամ ավելի ուշ:

Ստեղծված ընդհանուր պատկերը կարող է ներկայացվել Ազատության տան /Freedom house/ կողմից հրապարակված հետևյալ պատկերի միջոցով¹.



¹See <http://www.freedomhouse.org/>

Ընդհանուր միտումները նկատելի են նաև ստորև բերվող գրաֆիկական պատկերում:



Ստեղծված վիճակի հիմնական պատճառը, մեր կարծիքով, սահմանադրականության դեֆիցիտն էր բոլոր այս երկրներում:

Մի կողմից՝ սահմանադրություններում կատարվող փոփոխությունները նպատակաուղղվեցին գործադիր բուրգի ամրապնդմանը եւ ժողովրդավարական ինստիտուտների թուլացմանը, մյուս կողմից՝ նկատելի էր անցումը մարդակենտրոն սահմանադրական լուծումներից իշխանակենտրոն սահմանադրական լուծումների: Տիպական օրինակ կարող են ծառայել Հունգարիայում 2011թ. նոր Սահմանադրության ընդունումը եւ հետագա սահմանադրական փոփոխությունները /2013թ. մարտին/, ինչպես նաեւ Լեհաստանում 2015-2016թ.թ. փոփոխությունները՝ Սահմանադրական տրիբունալի առնչությամբ: Առանձին մասնագետներ խնդրահարույց են համարում նաեւ Չեխիայում 2012թ. սահմանադրական փոփոխությունները՝ խորհրդարանական կառավարման համակարգում երկրի Նախագահին առաջնային մանդատով օժտելու առնչությամբ:

Սակայն խնդիրը չի վերաբերում միայն սահմանադրական փոփոխություններին, էական է եւ այն, թե ինչ ընդգրկում է ունեցել սահմանադրականության դեֆիցիտը:

Վերջինիս ընդհանրական բնութագրում կարող է տրվել իրավունքի գերակայության տարբեր ինդիկատորների գծով տեղի ունեցած փոփոխությունների վերլուծության միջոցով, ինչը բերվում է ստորեւ²:

² Նման վերլուծությունների համար մեր կողմից առաջարկվել են մեթոդաբանական ու մեթոդական համալիր մոտեցումներ (մասնավորապես տե'ս. Գ.Գ. Հարությունյան, Հ.Լ. Սարգսյան, Ռ.Ա. Գեւորգյան, Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման եւ կառավարման խնդիրներ: Երեւան, 2017): Այսուհանդերձ, տվյալ վերլուծության համար գերադասեցինք հիմք ընդունել Ազատության տուն կազմակերպության կողմից հրապարակված՝ բոլորի համար այս պահին մատչելի տեղեկատվությունը:

Table 1. Civil Society 1999-2000 - 2017

	1999-2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2017	% 2017 /1999- 2000	% 2017 /2009
New EU Members													
Bulgaria	3.75	3.50	3.25	3.25	3.00	2.75	2.75	2.50	2.50	2.50	2.50	33	0
Czech Republic	1.50	1.50	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.25	1.50	2.00	-33	-33
Estonia	2.50	2.25	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	1.75	1.75	1.75	30	0
Hungary	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.50	1.50	1.75	2.75	-120	-57
Latvia	2.25	2.00	2.00	2.00	2.00	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	22	0
Lithuania	2.00	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.75	1.75	1.75	1.75	13	0
Poland	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.50	1.25	1.50	1.75	-40	-17
Romania	3.00	3.00	3.00	2.75	2.50	2.25	2.25	2.25	2.25	2.50	2.25	25	10
Slovakia	2.25	2.00	1.75	1.50	1.25	1.25	1.25	1.50	1.50	1.75	2.00	11	-14
Slovenia	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.75	1.75	2.00	2.00	2.00	2.00	-14	0
Average	2.15	2.03	1.93	1.85	1.78	1.73	1.73	1.83	1.75	1.88	2.05	5	-9
Median	2.13	1.88	1.75	1.50	1.50	1.63	1.63	1.75	1.75	1.75	2.00	6	-14
The Balkans													
Albania	4.00	4.00	3.75	3.75	3.50	3.25	3.00	3.00	3.00	3.00	3.00	25	0
Bosnia	4.50	4.50	4.25	4.00	3.75	3.75	3.75	3.50	3.50	3.50	3.50	22	0
Croatia	3.50	2.75	2.75	3.00	3.00	3.00	2.75	2.75	2.75	2.75	2.75	21	0
Macedonia	3.50	3.75	4.00	3.75	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	7	0
Yugoslavia	5.25	4.00	3.00	2.75	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	2.75	2.75	2.75	2.75	2.75	2.75	2.25	n/a	18
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	2.75	2.50	3.00	3.00	2.75	2.75	2.75	n/a	0
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	4.25	4.00	4.25	4.25	4.00	4.00	3.75	n/a	6
Average	4.15	3.80	3.55	3.45	3.32	3.21	3.25	3.21	3.14	3.14	3.04	27	3
Median	4.00	4.00	3.75	3.75	3.25	3.25	3.00	3.00	3.00	3.00	3.00	25	0
Non-Baltic Former Soviet States													
Armenia	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.75	3.75	-7	0
Azerbaijan	4.75	4.50	4.50	4.25	4.50	4.75	5.00	5.25	5.25	5.50	7.00	-47	-27
Belarus	6.00	6.50	6.25	6.50	6.75	6.75	6.75	6.50	6.50	6.25	6.25	-4	0
Georgia	3.75	4.00	4.00	4.00	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.75	3.75	0	0
Kazakhstan	5.00	5.00	5.50	5.50	5.50	5.50	5.75	5.75	5.50	5.50	6.50	-30	-18
Kyrgyzstan	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.75	5.00	-11	-5
Moldova	3.75	3.75	4.00	3.75	4.00	4.00	4.00	3.75	3.75	3.75	3.25	13	13
Russia	3.75	4.00	4.00	4.25	4.50	4.75	5.00	5.25	5.50	5.75	6.50	-73	-13
Tajikistan	5.25	5.00	5.00	5.00	5.00	4.75	5.00	5.00	5.50	5.75	6.50	-24	-13
Turkmenistan	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	0	0
Ukraine	4.00	3.75	3.75	3.50	3.75	3.00	2.75	2.75	2.75	2.75	2.50	38	9
Uzbekistan	6.50	6.50	6.75	6.50	6.50	6.50	7.00	7.00	7.00	7.00	7.00	-8	0
Average	4.81	4.83	4.90	4.85	4.92	4.88	4.98	4.98	5.02	5.13	5.42	-13	-6
Median	4.63	4.50	4.50	4.38	4.50	4.75	5.00	5.13	5.38	5.50	6.38	-38	-16

NOTES: The ratings are based on a scale of 1 to 7, with 1 representing the highest level of democratic progress and 7 the lowest. The 2017 ratings reflect the period January 1 through December 31, 2016.

Table 1. Civil Society 1999-2000 - 2017

Հիմնական հետեւությունները.

- Եթե մինչեւ 2006 թվականը Եվոպական միության անդամ դարձած Արեւելյան Եվրոպայի երկրներում քաղաքացիական հասարակության ինտեգրալ բնութագրիչը դրական միտում ունի, ապա հետագայում այն լուրջ անկում է արձանագրել: Մասնավորապես 2009-2017 թվականներին անկումը կազմել է 9 տոկոս:

- Առավել մեծ անկում է գրանցվել Հունգարիայում /57%/, Չեխիայում /33%/, Լեհաստանում /17%/, Սլովակիայում /9%/:

- Բալկանյան երկրներում առկա են դրական միտումներ:

- Նախկին ԽՍՀՄ երկրներում նույնպես վիճակը վատթարացման միտում ունի եւ այս հարցում «առաջատարներն» են Ռուսաստանի Դաշնությունը, Ադրբեջանը, Ղազախստանը, Արդգստանը:

- Առաջին եւ երրորդ խմբերում միջին շեղումը` 2000թ.` 2.2 անգամ, 2017թ.` 2.64 անգամ:

Table 2. Electoral Process 1999-2000 – 2017

	1999-2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2017	% 2017 /1999- 2000	% 2017 /2009	
New EU Members														
Bulgaria	2.25	2.00	2.00	2.00	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	2.25	0	-29	
Czech Republic	1.75	1.75	2.00	2.00	2.00	2.00	2.00	1.75	1.75	1.50	1.25	29	17	
Estonia	1.75	1.75	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	14	0	
Hungary	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.25	1.75	1.75	1.75	3.00	-140	-71	
Latvia	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	2.00	2.00	2.00	1.75	0	13	
Lithuania	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	2.00	-14	-14	
Poland	1.25	1.25	1.25	1.50	1.50	1.75	1.75	2.00	2.00	2.00	1.50	-20	25	
Romania	2.75	3.00	3.00	2.75	2.75	2.75	2.75	2.75	2.75	2.50	3.00	-9	-20	
Slovakia	2.50	2.25	1.75	1.50	1.50	1.25	1.25	1.50	1.50	1.50	1.50	40	0	
Slovenia	2.00	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	25	0	
Average	1.90	1.85	1.83	1.78	1.73	1.73	1.73	1.83	1.83	1.78	1.93	-2	-8	
Median	1.75	1.75	1.75	1.75	1.63	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.63	7	7	
The Balkans														
Albania	4.25	4.00	3.75	3.75	3.75	3.75	3.50	4.00	4.00	3.75	3.75	12	0	
Bosnia	5.00	4.75	4.25	3.75	3.50	3.25	3.00	3.00	3.00	3.00	3.25	35	-8	
Croatia	4.25	3.25	3.25	3.25	3.25	3.00	3.25	3.25	3.25	3.25	3.00	29	8	
Macedonia	3.50	3.75	4.50	3.50	3.50	3.00	3.25	3.25	3.25	3.50	4.00	-14	-14	
Yugoslavia	5.50	4.75	3.75	3.75	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	
Serbia	n/a	n/a	n/a	n/a	3.50	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.50	n/a	-8
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	3.50	3.25	3.50	3.50	3.25	3.25	3.50	n/a	-8	
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	5.25	4.75	4.75	4.75	4.50	4.50	4.75	n/a	-6	
Average	4.50	4.10	3.90	3.60	3.75	3.46	3.50	3.57	3.50	3.50	3.68	18	-5	
Median	4.25	4.00	3.75	3.75	3.50	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.50	18	-8	
Non-Baltic Former Soviet States														
Armenia	5.25	5.50	5.50	5.50	5.75	5.75	5.75	5.75	5.50	5.75	6.00	-14	-4	
Azerbaijan	5.50	5.75	5.75	5.75	6.00	6.25	6.50	6.50	6.50	6.75	7.00	-27	-4	
Belarus	6.75	6.75	6.75	6.75	6.75	7.00	7.00	7.00	7.00	6.75	6.75	0	0	
Georgia	4.00	4.50	5.00	5.25	5.25	4.75	4.75	4.50	4.75	5.25	4.50	-13	14	
Kazakhstan	6.00	6.25	6.25	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.75	6.75	6.75	-13	0	
Kyrgyzstan	5.00	5.75	5.75	6.00	6.00	6.00	5.75	5.75	6.00	6.00	5.50	-10	8	
Moldova	3.25	3.25	3.50	3.75	4.00	4.00	3.75	3.75	3.75	4.00	4.00	-23	0	
Russia	4.00	4.25	4.50	4.75	5.50	6.00	6.25	6.50	6.75	6.75	6.75	-69	0	
Tajikistan	5.50	5.25	5.25	5.25	5.75	6.00	6.25	6.50	6.50	6.50	6.75	-23	-4	
Turkmenistan	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	0	0	
Ukraine	3.50	4.00	4.50	4.00	4.25	3.50	3.25	3.00	3.00	3.50	3.50	0	0	
Uzbekistan	6.50	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	7.00	7.00	7.00	-8	0	
Average	5.19	5.42	5.54	5.60	5.79	5.79	5.79	5.79	5.88	6.00	5.96	-15	1	
Median	5.38	5.63	5.63	5.63	5.88	6.00	6.25	6.50	6.50	6.63	6.75	-25	-2	

Table 2. Electoral Process 1999-2000 – 2017

Հիմնական հետևությունները.

- Երկրների գերակշռող մասում ընտրական գործընթացներն ակնհայտ նեգատիվ ընթացք են ունեցել: Եթե վերջին 17 տարիներին անկումը գնահատվում է 2 տոկոս, ապա միայն վերջին ութ տարիներին այն հասել է 8 տոկոսի:
- Առավել մեծ անկում է գրանցվել Հունգարիայում /71%/, Բուլղարիայում /29%/, Ռումինիայում /20%/, Լիտվայում /14%/:
- Բացասական միտումներ են առկա նաև Բալկանյան երկրներում:
- Նախկին ԽՍՀՄ երկրներում վերջին տարիներին վիճակի դրական փոփոխության միտումներ են նկատվում: Սակայն եթե առաջին եւ երրորդ խմբերում միջին շեղումը 2000թ. կազմել է 2.7 անգամ, ապա 2017թ. այն հասել է 3.1անգամի:

Table 3. Independent Media 1999-2000 - 2017

	1999-2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2017	% /1999-2000	% /2009
New EU Members													
Bulgaria	3.50	3.25	3.25	3.50	3.50	3.50	3.25	3.50	3.50	3.75	4.25	-21	-13
Czech Republic	1.75	2.00	2.50	2.25	2.25	2.00	2.00	2.25	2.25	2.25	2.75	-57	-22
Estonia	1.75	1.75	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	14	0
Hungary	2.00	2.25	2.25	2.25	2.25	2.50	2.50	2.50	2.50	2.50	4.25	-113	-70
Latvia	1.75	1.75	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.75	1.75	2.00	-14	-14
Lithuania	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	2.25	-29	-29
Poland	1.50	1.50	1.50	1.75	1.75	1.50	1.75	2.25	2.25	2.00	3.00	-100	-50
Romania	3.50	3.50	3.50	3.75	3.75	4.00	4.00	3.75	3.75	3.75	4.25	-21	-13
Slovakia	2.25	2.00	2.00	2.00	2.25	2.25	2.25	2.25	2.50	2.75	2.75	-22	0
Slovenia	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.50	1.75	2.00	2.25	2.25	2.50	-43	-11
Average	2.15	2.15	2.20	2.25	2.23	2.20	2.23	2.33	2.40	2.43	2.95	-37	-21
Median	1.75	1.88	1.88	1.88	2.00	1.88	1.88	2.25	2.25	2.25	2.75	-57	-22
The Balkans													
Albania	4.50	4.25	4.00	4.00	3.75	4.00	3.75	3.75	3.75	3.75	4.25	6	-13
Bosnia	5.00	4.50	4.25	4.25	4.25	4.00	4.00	4.00	4.25	4.50	4.75	5	-6
Croatia	5.00	3.50	3.50	3.75	3.75	3.75	3.75	4.00	3.75	4.00	4.25	15	-6
Macedonia	3.75	3.75	3.75	4.00	4.25	4.25	4.25	4.25	4.25	4.25	5.25	-40	-24
Yugoslavia	5.75	4.50	3.50	3.25	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	3.50	3.25	3.25	3.50	3.75	3.75	4.50	n/a	-20
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	3.25	3.25	3.25	3.50	3.75	3.75	4.50	n/a	-20
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	5.50	5.50	5.50	5.50	5.50	5.50	5.00	n/a	9
Average	4.80	4.10	3.80	3.85	4.04	4.00	3.96	4.07	4.14	4.21	4.64	3	-10
Median	5.00	4.25	3.75	4.00	3.75	4.00	3.75	4.00	3.75	4.00	4.50	10	-13
Non-Baltic Former Soviet States													
Armenia	4.75	4.75	4.75	5.00	5.25	5.50	5.50	5.75	5.75	6.00	5.50	-16	8
Azerbaijan	5.50	5.75	5.50	5.50	5.75	6.00	6.00	6.25	6.25	6.75	7.00	-27	-4
Belarus	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	0	0
Georgia	3.75	3.50	3.75	4.00	4.00	4.25	4.25	4.00	4.25	4.25	4.00	-7	6
Kazakhstan	5.50	6.00	6.00	6.25	6.50	6.50	6.75	6.75	6.75	6.50	6.75	-23	-4
Kyrgyzstan	5.00	5.00	5.75	6.00	6.00	5.75	5.75	5.75	6.00	6.25	6.00	-20	4
Moldova	4.00	4.25	4.50	4.75	5.00	5.00	5.00	5.25	5.50	5.75	5.00	-25	13
Russia	4.75	5.25	5.50	5.50	5.75	6.00	6.00	6.25	6.25	6.25	6.50	-37	-4
Tajikistan	5.75	5.50	5.75	5.75	5.75	6.00	6.25	6.25	6.00	6.00	6.50	-13	-8
Turkmenistan	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	0	0
Ukraine	5.00	5.25	5.50	5.50	5.50	4.75	3.75	3.75	3.50	3.50	4.00	20	-14
Uzbekistan	6.50	6.75	6.75	6.75	6.75	6.75	7.00	7.00	7.00	7.00	7.00	-8	0
Average	5.35	5.48	5.63	5.73	5.83	5.85	5.83	5.90	5.92	6.00	6.00	-12	0
Median	5.25	5.38	5.63	5.63	5.75	6.00	6.00	6.25	6.13	6.25	6.50	-24	-4

Table 3. Independent Media 1999-2000 - 2017

Հիմնական հետեւությունները.

- Մամուլի անկախության ոլորտում վիճակն առավել քան մտահոգիչ է: Գրեթե բոլոր երկրներում /մասնակի բացառությամբ Էստոնիայի, Վրաստանի, Մոլդովայի ու Հայաստանի/ գրանցվել է մամուլի անկախության ցուցիչի զգալի անկում:
- 2000-2017 թվականներին առավել մեծ անկում է գրանցվել Հունգարիայում /113%/, Լեհաստանում /100%/, Չեխիայում /57%/, Սլովենիայում /43%/ եւ այլն.
- Բալկանյան երկրներում վիճակը վատացել է հատկապես վերջին տարիներին: Այստեղ բացասական միտումով աչքի են ընկնում Մակեդոնիան, Սերբիան, Ալբանիան:
- Նախկին ԽՍՀՄ երկրներում բացասական միտումներով «առաջատար» են Ռուսաստանի Դաշնությունը, Ադրբեյջանը, Մոլդովան, Ղազախստանը:
- Մեծ է նաեւ տարբերությունն առաջին եւ երրորդ խմբերում` միջին շեղումը 2000թ. կազմել է 2.49 անգամ, 2017թ.` 2.03 անգամ: Այս ցուցանիշով նկատելի է շեղման մեղմացման միտում:

Table 4. National Democratic Governance 1999-2000 - 2017

	1999-2000 GOV	2001 GOV	2002 GOV	2003 GOV	2004 GOV	2005 NGOV	2006 NGOV	2007 NGOV	2008 NGOV	2009 NGOV	2017 NGOV	% /1999-2000	% /2009
New EU Members													
Bulgaria	3.75	3.50	3.50	3.75	3.75	3.50	3.00	3.00	3.00	3.25	3.75	0	-15
Czech Republic	2.00	2.00	2.25	2.25	2.25	2.50	2.50	3.00	2.75	2.75	2.75	-38	0
Estonia	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.25	0	0
Hungary	2.50	3.00	3.00	2.50	2.50	2.00	2.00	2.25	2.25	2.50	4.25	-70	-70
Latvia	2.50	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.00	2.00	2.00	2.50	2.00	20	20
Lithuania	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.75	2.75	-10	0
Poland	1.75	1.75	2.00	2.00	2.00	2.50	2.75	3.25	3.50	3.25	3.25	-86	0
Romania	3.50	3.75	3.75	3.75	3.75	3.50	3.50	3.50	3.75	3.75	3.50	0	7
Slovakia	3.00	2.75	2.25	2.25	2.25	2.00	2.00	2.25	2.50	2.75	3.00	0	-9
Slovenia	2.25	2.50	2.25	2.25	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.25	0	-13
Average	2.60	2.63	2.60	2.58	2.55	2.50	2.45	2.60	2.65	2.78	2.98	-15	-7
Median	2.50	2.50	2.25	2.25	2.25	2.38	2.38	2.38	2.50	2.75	2.88	-15	-5
The Balkans													
Albania	4.75	4.25	4.25	4.25	4.25	4.25	4.00	4.25	4.25	4.25	4.50	5	-6
Bosnia	6.00	6.00	5.50	5.25	5.00	4.75	4.75	4.75	5.00	5.00	6.00	0	-20
Croatia	4.00	3.50	3.50	3.75	3.75	3.50	3.50	3.50	3.25	3.50	3.50	13	0
Macedonia	3.00	3.75	4.25	4.50	4.00	4.00	3.75	3.75	4.00	4.00	5.00	-67	-25
Yugoslavia	5.50	5.25	4.25	4.25	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	4.00	4.00	4.00	3.75	4.00	4.00	4.25	n/a	-6
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	4.00	4.50	4.50	4.50	4.25	4.25	4.25	n/a	0
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	6.00	5.75	5.75	5.75	5.50	5.25	5.50	n/a	-5
Average	4.65	4.55	4.35	4.40	4.43	4.39	4.32	4.32	4.32	4.32	4.71	-1	-9
Median	4.75	4.25	4.25	4.25	4.00	4.25	4.00	4.25	4.25	4.25	4.50	5	-6
Non-Baltic Former Soviet States													
Armenia	4.50	4.50	4.50	4.75	4.75	5.00	5.00	5.25	5.25	5.75	5.75	-28	0
Azerbaijan	6.25	6.25	6.00	5.75	5.75	6.00	6.00	6.00	6.00	6.25	7.00	-12	-12
Belarus	6.25	6.25	6.50	6.50	6.50	6.75	7.00	7.00	7.00	6.75	6.50	-4	4
Georgia	4.50	4.75	5.00	5.50	5.75	5.50	5.50	5.50	5.75	6.00	5.50	-22	8
Kazakhstan	5.00	5.00	5.75	6.25	6.25	6.50	6.75	6.75	6.75	6.75	6.75	-35	0
Kyrgyzstan	5.00	5.25	5.50	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.25	6.50	6.50	-30	0
Moldova	4.50	4.50	4.75	5.25	5.50	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	-28	0
Russia	4.50	5.00	5.25	5.00	5.25	5.75	6.00	6.00	6.25	6.50	6.75	-50	-4
Tajikistan	6.25	6.00	6.00	6.00	5.75	6.00	6.25	6.25	6.25	6.25	7.00	-12	-12
Turkmenistan	6.75	6.75	6.75	6.75	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	-4	0
Ukraine	4.75	4.75	5.00	5.00	5.25	5.00	4.50	4.75	4.75	5.00	5.75	-21	-15
Uzbekistan	6.25	6.00	6.00	6.25	6.25	6.50	7.00	7.00	7.00	7.00	7.00	-12	0
Average	5.38	5.42	5.58	5.75	5.83	5.98	6.06	6.10	6.17	6.29	6.44	-20	-2
Median	5.00	5.13	5.63	5.88	5.75	6.00	6.00	6.00	6.25	6.38	6.63	-33	-4

Table 4. National Democratic Governance 1999-2000 - 2017

Հիմնական հետևությունները.

- Ժողովրդավարական կառավարման ցուցիչը նույնպես նկատելի անկման միտում է գրանցել:
 - 2000-2017 թվականներին առավել մեծ անկում է գրանցվել Լեհաստանում /86%/, Հունգարիայում /70%/, Չեխիայում /38%/, Լիտվայում /10%/ եւ այլն.
 - Բալկանյան երկրներում վիճակը վատացել է հատկապես Մակեդոնիան եւ Բոսնիայում:
 - Նախկին ԽՍՀՄ երկրներում բացասական միտումները ընդգծված են հատկապես 2000-2009 թվականներին, որից հետո կան դրական միտումներ: Սակայն դա բնորոշ է Ադրբեջանին, Տաջիկստանին, Ռուսաստանի Դաշնությանը եւ Ուկրաինային:
 - Առաջին եւ երրորդ խմբերում միջին շեղումը խորացման միտում ունի` 2000թ. այն կազմել է 2.07 անգամ, 2017թ.` 2.16 անգամ:

Table 5. Local Democratic Governance 1999-2000 - 2017

	1999-2000 GOV	2001 GOV	2002 GOV	2003 GOV	2004 GOV	2005 LGOV	2006 LGOV	2007 LGOV	2008 LGOV	2009 LGOV	2017 LGOV	% /1999-2000	% /2009
New EU Members													
Bulgaria	3.75	3.50	3.50	3.75	3.75	3.50	3.00	3.00	3.00	3.00	3.00	20	0
Czech Republic	2.00	2.00	2.25	2.25	2.25	2.00	2.00	1.75	1.75	1.75	1.75	13	0
Estonia	2.25	2.25	2.25	2.25	2.25	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	-11	0
Hungary	2.50	3.00	3.00	2.50	2.50	2.25	2.25	2.25	2.25	2.50	3.00	-20	-20
Latvia	2.50	2.25	2.25	2.25	2.25	2.50	2.50	2.50	2.25	2.25	2.25	10	0
Lithuania	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.25	10	10
Poland	1.75	1.75	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.25	2.25	2.00	1.75	0	13
Romania	3.50	3.75	3.75	3.75	3.75	3.00	3.00	3.00	3.00	3.00	3.25	7	-8
Slovakia	3.00	2.75	2.25	2.25	2.25	2.25	2.00	2.00	2.25	2.50	2.50	17	0
Slovenia	2.25	2.50	2.25	2.25	2.00	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	33	0
Average	2.60	2.63	2.60	2.58	2.55	2.40	2.33	2.33	2.33	2.35	2.38	8	-1
Median	2.50	2.50	2.25	2.25	2.25	2.38	2.38	2.38	2.25	2.50	2.38	5	5
The Balkans													
Albania	4.75	4.25	4.25	4.25	4.25	3.25	2.75	2.75	2.75	2.75	3.50	26	-27
Bosnia	6.00	6.00	5.50	5.25	5.00	4.75	4.75	4.75	4.75	4.75	4.75	21	0
Croatia	4.00	3.50	3.50	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	6	0
Macedonia	3.00	3.75	4.25	4.50	4.00	4.00	3.75	3.75	3.75	3.75	4.00	-33	-7
Yugoslavia	5.50	5.25	4.25	4.25	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	4.00	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.50	n/a	7
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	4.00	3.50	3.50	3.25	3.25	3.25	3.50	n/a	-8
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	6.00	5.50	5.50	5.50	5.50	5.25	4.50	n/a	14
Average	4.65	4.55	4.35	4.40	4.43	4.07	3.96	3.93	3.93	3.89	3.93	15	-1
Median	4.75	4.25	4.25	4.25	4.00	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	21	0
Non-Baltic Former Soviet States													
Armenia	4.50	4.50	4.50	4.75	4.75	5.50	5.50	5.50	5.50	5.50	5.75	-28	-5
Azerbaijan	6.25	6.25	6.00	5.75	5.75	6.00	6.00	6.00	6.00	6.25	6.50	-4	-4
Belarus	6.25	6.25	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.75	6.75	6.75	-8	0
Georgia	4.50	4.75	5.00	5.50	5.75	6.00	5.75	5.50	5.50	5.50	5.25	-17	5
Kazakhstan	5.00	5.00	5.75	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.50	-30	-4
Kyrgyzstan	5.00	5.25	5.50	6.00	6.00	5.75	6.25	6.25	6.50	6.50	6.25	-25	4
Moldova	4.50	4.50	4.75	5.25	5.50	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.50	-22	4
Russia	4.50	5.00	5.25	5.00	5.25	5.75	5.75	5.75	5.75	5.75	6.25	-39	-9
Tajikistan	6.25	6.00	6.00	6.00	5.75	5.75	5.75	5.75	6.00	6.00	6.00	4	0
Turkmenistan	6.75	6.75	6.75	6.75	7.00	7.00	7.00	7.00	6.75	6.75	6.75	0	0
Ukraine	4.75	4.75	5.00	5.00	5.25	5.25	5.25	5.25	5.25	5.25	5.00	-5	5
Uzbekistan	6.25	6.00	6.00	6.25	6.25	6.25	6.75	6.75	6.75	6.75	6.75	-8	0
Average	5.38	5.42	5.58	5.75	5.83	5.98	6.04	6.02	6.06	6.08	6.10	-13	0
Median	5.00	5.13	5.63	5.88	5.75	5.88	5.88	5.88	6.00	6.13	6.25	-25	-2

Table 5. Local Democratic Governance 1999-2000 - 2017

Հիմնական հետեությունները.

- Առաջին խմբում տեղական ինքնակառավարման ցուցիչի ակնհայտ դրական միտումներ են առկա, բացառությամբ Հունգարիայի եւ Ռումինիայի:
- Նախկին ԽՍՀՄ երկրներում բացասական միտումներն ակնհայտ են երկրներից մեծ մասում: Այստեղ տեղական ինքնակառավարումը, որպես ժողովրդավարական ինքնուրույն ու կարելուր ինստիտուտ դեռեւս լիարժեք չի կայանում:
- Առկա է նաեւ առաջին եւ երրորդ խմբերում միջին շեղման խորացման միտում` 2000թ. այն կազմել է 2.07 անգամ, 2017թ.` 2.56 անգամ:

Table 6. Judicial Framework and Independence 1999-2000 - 2017

	1999-2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2017	% /1999- 2000	% /2009
New EU Members													
Bulgaria	3.50	3.50	3.50	3.50	3.25	3.25	3.00	2.75	2.75	3.00	3.50	0	-17
Czech Republic	2.25	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.25	2.00	2.00	2.25	1.75	22	22
Estonia	2.00	2.00	1.75	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.50	1.50	25	0
Hungary	1.75	2.00	2.00	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	3.00	-71	-71
Latvia	2.00	2.00	2.00	2.25	2.00	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.50	25	14
Lithuania	2.00	1.75	2.00	1.75	1.75	1.75	1.50	1.75	1.75	1.75	1.75	13	0
Poland	1.50	1.50	1.50	1.50	1.50	2.00	2.25	2.25	2.50	2.25	3.25	-117	-44
Romania	4.25	4.25	4.25	4.25	4.25	4.00	4.00	3.75	4.00	4.00	3.75	12	6
Slovakia	2.50	2.25	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.25	2.50	2.75	2.75	-10	0
Slovenia	1.50	1.50	1.75	1.75	1.75	1.50	1.50	1.50	1.50	1.75	2.00	-33	-14
Average	2.33	2.33	2.33	2.30	2.25	2.20	2.15	2.13	2.20	2.28	2.48	-6	-9
Median	2.00	2.00	2.00	1.88	1.88	1.88	1.88	1.88	1.88	2.00	2.38	-19	-19
The Balkans													
Albania	5.00	4.50	4.50	4.25	4.25	4.50	4.25	4.00	4.00	4.25	4.75	5	-12
Bosnia	6.00	5.50	5.25	5.00	4.50	4.25	4.00	4.00	4.00	4.00	4.50	25	-13
Croatia	4.75	3.75	3.75	4.25	4.50	4.50	4.25	4.25	4.25	4.25	4.50	5	-6
Macedonia	4.25	4.25	4.75	4.50	4.00	3.75	3.75	3.75	4.00	4.00	4.75	-12	-19
Yugoslavia	5.75	5.50	4.25	4.25	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	4.25	4.25	4.25	4.25	4.50	4.50	4.50	n/a	0
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	4.25	4.25	4.25	4.25	4.00	4.25	4.00	n/a	6
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	6.00	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.50	n/a	4
Average	5.15	4.70	4.50	4.45	4.54	4.46	4.36	4.32	4.36	4.43	4.64	10	-5
Median	5.00	4.50	4.50	4.25	4.25	4.25	4.25	4.25	4.00	4.25	4.50	10	-6
Non-Baltic Former Soviet States													
Armenia	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.25	5.00	5.00	5.25	5.50	5.50	-10	0
Azerbaijan	5.50	5.25	5.25	5.25	5.50	5.75	5.75	5.75	5.75	5.75	7.00	-27	-22
Belarus	6.50	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	6.75	7.00	-8	-4
Georgia	4.00	4.00	4.25	4.50	4.50	5.00	4.75	4.75	4.75	4.75	4.75	-19	0
Kazakhstan	5.50	5.75	6.00	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.00	6.50	-18	-8
Kyrgyzstan	5.00	5.25	5.25	5.50	5.50	5.50	5.50	5.50	6.00	6.00	6.50	-30	-8
Moldova	4.00	4.00	4.00	4.50	4.50	4.75	4.50	4.50	4.50	4.50	5.00	-25	-11
Russia	4.25	4.50	4.75	4.50	4.75	5.25	5.25	5.25	5.25	5.50	6.50	-53	-18
Tajikistan	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	6.00	6.25	7.00	-22	-12
Turkmenistan	6.75	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	7.00	-4	0
Ukraine	4.50	4.50	4.75	4.50	4.75	4.25	4.25	4.50	4.75	5.00	5.75	-28	-15
Uzbekistan	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.25	6.75	6.75	6.75	7.00	7.00	-8	0
Average	5.27	5.35	5.44	5.50	5.56	5.65	5.63	5.65	5.75	5.83	6.29	-19	-8
Median	5.25	5.25	5.25	5.38	5.50	5.63	5.63	5.63	5.88	5.88	6.50	-24	-11

Table 6. Judicial Framework and Independence 1999-2000 - 2017
Հիմնական հետեությունները.

- Մի շարք երկրներում դատական իշխանության անկախության թուլացումը լուրջ վտանգ է դառնում իրավական պետության եւ իրավունքի գերակայության երաշխավորման համար: Դրանց թվում են Հունգարիան, Լեհաստանը, Բուլղարիան, Սլովենիան, Մակեդոնիան, Ադրբեջանը, Ռուսաստանի Դաշնությունը, Ալբանիան, Ուկրաինան, եւ այլն:

- Միաժամանակ առաջին եւ երրորդ խմբերում միջին շեղումը խորացման միտում ունի՝ 2000թ. այն կազմել է 2.26 անգամ, 2017թ.՝ 2.54 անգամ:

Table 7. Corruption 1999-2000 - 2017

	1999-2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2017	% 2017 /1999- 2000	% 2017 /2009
New EU Members													
Bulgaria	4.75	4.75	4.50	4.25	4.25	4.00	3.75	3.75	3.50	4.00	4.25	11	-6
Czech Republic	3.25	3.75	3.75	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.25	3.25	3.50	-8	-8
Estonia	3.25	2.75	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	23	0
Hungary	2.50	3.00	3.00	2.75	2.75	2.75	3.00	3.00	3.00	3.25	4.50	-80	-38
Latvia	3.50	3.50	3.75	3.50	3.50	3.50	3.25	3.00	3.00	3.25	3.00	14	8
Lithuania	3.75	3.75	3.75	3.50	3.50	3.75	4.00	4.00	3.75	3.75	3.50	7	7
Poland	2.25	2.25	2.25	2.50	2.50	3.00	3.25	3.00	3.00	2.75	3.50	-56	-27
Romania	4.25	4.50	4.75	4.50	4.50	4.25	4.25	4.00	4.00	4.00	3.75	12	6
Slovakia	3.75	3.75	3.25	3.25	3.25	3.00	3.00	3.25	3.25	3.25	3.75	0	-15
Slovenia	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.25	2.25	2.25	2.50	2.50	-25	0
Average	3.33	3.40	3.35	3.23	3.23	3.23	3.28	3.23	3.15	3.25	3.48	-5	-7
Median	3.38	3.63	3.50	3.38	3.38	3.25	3.25	3.13	3.13	3.25	3.50	-4	-8
The Balkans													
Albania	6.00	5.50	5.25	5.00	5.25	5.25	5.25	5.00	5.00	5.00	5.25	13	-5
Bosnia	6.00	5.75	5.50	5.00	4.75	4.50	4.25	4.25	4.25	4.50	5.00	17	-11
Croatia	5.25	4.50	4.50	4.75	4.75	4.75	4.75	4.75	4.50	4.50	4.25	19	6
Macedonia	5.00	5.00	5.50	5.50	5.00	5.00	4.75	4.75	4.50	4.25	4.75	5	-12
Yugoslavia	6.25	6.25	5.25	5.00	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	5.00	5.00	4.75	4.50	4.50	4.50	4.25	n/a	6
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	5.25	5.25	5.25	5.50	5.25	5.00	4.75	n/a	5
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	6.00	6.00	6.00	6.00	5.75	5.75	5.75	n/a	0
Average	5.70	5.40	5.20	5.05	5.14	5.11	5.00	4.96	4.82	4.79	4.86	15	-1
Median	6.00	5.50	5.25	5.00	5.00	5.00	4.75	4.75	4.50	4.50	4.75	21	-6
Non-Baltic Former Soviet States													
Armenia	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.50	5.25	9	5
Azerbaijan	6.00	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.50	7.00	-17	-8
Belarus	5.25	5.25	5.25	5.50	5.75	6.00	6.25	6.25	6.25	6.00	6.25	-19	-4
Georgia	5.00	5.25	5.50	5.75	6.00	5.75	5.50	5.00	5.00	5.00	4.50	10	10
Kazakhstan	6.00	6.25	6.25	6.25	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.75	-13	-4
Kyrgyzstan	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.25	6.25	6.25	-4	0
Moldova	6.00	6.00	6.25	6.25	6.25	6.25	6.00	6.00	6.00	6.00	6.00	0	0
Russia	6.25	6.25	6.00	5.75	5.75	5.75	6.00	6.00	6.00	6.25	6.75	-8	-8
Tajikistan	6.00	6.00	6.00	6.00	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.25	6.75	-13	-8
Turkmenistan	6.00	6.25	6.25	6.25	6.25	6.50	6.75	6.75	6.75	6.75	7.00	-17	-4
Ukraine	6.00	6.00	6.00	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	5.75	4	0
Uzbekistan	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.50	6.50	6.50	6.50	7.00	-17	-8
Average	5.85	5.94	5.96	5.96	6.04	6.06	6.13	6.08	6.10	6.10	6.27	-7	-3
Median	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.13	6.13	6.25	6.25	6.50	-8	-4

Table 7. Corruption 1999-2000 - 2017

Հիմնական հետեւությունները.

- Կոռուպցիայի հիմնախնդրին ստորել ավելի հանգամանալից կանդրադառնանք: Միայն նշենք, որ այս ցուցիչը ընդհանուր միտումների որոշակի խտացված ու ընդգրկուն պատկերն է ներկայացնում: Այն լավագույնս է բնութագրում քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման հետեւանքները եւ իշխանությունների փոխադարձ հավասարակշռման համակարգի անկատարությունը:
- Բացասական միտումներն ընդգծված առկա են հատկապես Հունգարիայում, Լեհաստանում, Չեխիայում, Սլովենիայում, Մակեդոնիայում, Ադրբեջանում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ այլն:
- Գրեթե չի փոխվել նաեւ առաջին եւ երրորդ խմբերի միջեւ միջին շեղումը՝ 2000թ. այն կազմել է 1.76 անգամ, 2017թ.՝ 1.80 անգամ:

Table 8. Democracy Score 1999-2000 - 2017


	1999-2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2017	% 2017 /1999- 2000	% 2017 /2009
New EU Members													
Bulgaria	3.58	3.42	3.33	3.38	3.25	3.18	2.93	2.89	2.86	3.04	3.29	8	-8
Czech Republic	2.08	2.25	2.46	2.33	2.33	2.29	2.25	2.25	2.14	2.18	2.25	-8	-3
Estonia	2.25	2.13	2.00	2.00	1.92	1.96	1.96	1.96	1.93	1.93	1.93	14	0
Hungary	1.88	2.13	2.13	1.96	1.96	1.96	2.00	2.14	2.14	2.29	3.54	-88	-55
Latvia	2.29	2.21	2.25	2.25	2.17	2.14	2.07	2.07	2.07	2.18	2.04	11	6
Lithuania	2.29	2.21	2.21	2.13	2.13	2.21	2.21	2.29	2.25	2.29	2.32	-1	-1
Poland	1.58	1.58	1.63	1.75	1.75	2.00	2.14	2.36	2.39	2.25	2.57	-63	-14
Romania	3.54	3.67	3.71	3.63	3.58	3.39	3.39	3.29	3.36	3.36	3.39	4	-1
Slovakia	2.71	2.50	2.17	2.08	2.08	2.00	1.96	2.14	2.29	2.46	2.61	4	-6
Slovenia	1.88	1.88	1.83	1.79	1.75	1.68	1.75	1.82	1.86	1.93	2.04	-9	-6
Average	2.41	2.40	2.37	2.33	2.29	2.28	2.27	2.32	2.33	2.39	2.60	-8	-9
Median	2.27	2.21	2.19	2.10	2.10	2.07	2.11	2.20	2.20	2.27	2.45	-8	-8
The Balkans													
Albania	4.75	4.42	4.25	4.17	4.13	4.04	3.79	3.82	3.82	3.82	4.14	13	-8
Bosnia	5.42	5.17	4.83	4.54	4.29	4.18	4.07	4.04	4.11	4.18	4.54	16	-9
Croatia	4.46	3.54	3.54	3.79	3.83	3.75	3.71	3.75	3.64	3.71	3.71	17	0
Macedonia	3.83	4.04	4.46	4.29	4.00	3.89	3.82	3.82	3.86	3.86	4.43	-16	-15
Yugoslavia	5.67	5.04	4.00	3.88	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Serbia	n/a	n/a	n/a	n/a	3.83	3.75	3.71	3.68	3.79	3.79	3.82	n/a	-1
Montenegro	n/a	n/a	n/a	n/a	3.83	3.79	3.89	3.93	3.79	3.79	3.89	n/a	-3
Kosovo	n/a	n/a	n/a	n/a	5.50	5.32	5.36	5.36	5.21	5.11	4.96	n/a	3
Average	4.83	4.44	4.22	4.13	4.20	4.10	4.05	4.06	4.03	4.04	4.21	13	-4
Median	4.75	4.42	4.25	4.17	4.00	3.89	3.82	3.82	3.82	3.82	4.14	13	-8
Non-Baltic Former Soviet States													
Armenia	4.79	4.83	4.83	4.92	5.00	5.18	5.14	5.21	5.21	5.39	5.39	-13	0
Azerbaijan	5.58	5.63	5.54	5.46	5.63	5.86	5.93	6.00	6.00	6.25	6.93	-24	-11
Belarus	6.25	6.38	6.38	6.46	6.54	6.64	6.71	6.68	6.71	6.57	6.61	-6	-1
Georgia	4.17	4.33	4.58	4.83	4.83	4.96	4.86	4.68	4.79	4.93	4.61	-11	6
Kazakhstan	5.50	5.71	5.96	6.17	6.25	6.29	6.39	6.39	6.39	6.32	6.64	-21	-5
Kyrgyzstan	5.08	5.29	5.46	5.67	5.67	5.64	5.68	5.68	5.93	6.04	6.00	-18	1
Moldova	4.25	4.29	4.50	4.71	4.88	5.07	4.96	4.96	5.00	5.07	4.93	-16	3
Russia	4.58	4.88	5.00	4.96	5.25	5.61	5.75	5.86	5.96	6.11	6.57	-43	-8
Tajikistan	5.75	5.58	5.63	5.63	5.71	5.79	5.93	5.96	6.07	6.14	6.64	-15	-8
Turkmenistan	6.75	6.83	6.83	6.83	6.88	6.93	6.96	6.96	6.93	6.93	6.96	-3	0
Ukraine	4.63	4.71	4.92	4.71	4.88	4.50	4.21	4.25	4.25	4.39	4.61	0	-5
Uzbekistan	6.38	6.42	6.46	6.46	6.46	6.43	6.82	6.82	6.86	6.89	6.96	-9	-1
Average	5.31	5.41	5.51	5.57	5.66	5.74	5.78	5.79	5.84	5.92	6.07	-14	-3
Median	5.29	5.44	5.50	5.54	5.65	5.72	5.84	5.91	5.98	6.13	6.59	-25	-8

Table 8. Democracy Score 1999-2000 - 2017
Հիմնական հետևությունները.

Եթե ամփոփ գնահատում ենք ժողովրդավարական զարգացումների արդյունքները, ապա ըստ ներկայացված հետազոտության տվյալների դրանք ընդգծված նեգատիվ բնույթ ունեն Հունգարիայում, Լեհաստանում, Սլովենիայում, Մակեդոնիայում, Ադրբեյջանում, Ռուսաստանի Դաշնությունում:

Այս ցուցանիշով նույնպես առաջին եւ երրորդ խմբերում միջին շեղումը խորացման միտում ունի՝ 2000թ.՝ 2.2 անգամ, 2017թ.՝ 2.33 անգամ:

Առկա բացասական միտումների հաղթահարման գերագույն խնդիրներից մեկը իշխանությունների հավասարակշռման ու դրանց գործունակության ապահովման ճիշտ մոդելի ընտրությունն է:



Ցավոք, դա պատշաճ ձեռով չապահովվեց երկրների մեծ մասում: Հետեւանքը եղավ այն, որ իրավունքի գերակայության հիմնական բնութագրիչներն սկսեցին բացասական միտումներ արձանագրել:

Վերը բերված պատկերներին նույնաբնույթ են նաեւ Միջազգային արդարադատական ծրագրով իրավունքի գերակայության ինդեքսի գնահատման շրջանակներում արձանագրված արդյունքները³: Այս ծրագրով հիմք են ընդունվում 535 տարբեր ցուցանիշներ, որոնք խմբավորվում են 8 տարբեր որակական խմբերում, եւ դրանցից մեկը կոռուպցիան է:

Նպատակ չունենալով քննարկման առարկա դարձնել ուսումնասիրության մեթոդիկան եւ ցուցանիշների ընտրության կարգը, ցանկանում ենք արձանագրել, որ հիշյալ ծրագրով ներկայացվող փաստական նյութը՝ հատկապես կոռուպցիոն երեւույթների գնահատման ու միտումների բացահայտման առումով, ընդգրկուն հետազոտությունների արդյունք է, ուստի **համառոտ վերլուծությունը կներկայացնենք բացառապես դարձյալ բոլորին մատչելի այդ փաստական նյութի հիման վրա:**

Ի՞նչ են վկայում «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի հիման վրա կատարված դիտարկումները:

³ See The World Justice Project /worldjusticeproject.org/, Rule of Law index.

Նախ` ուշագրավ է, որ «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի շրջանակներում ուսումնասիրման առարկա դարձած 100-ից ավելի երկրներից միայն 17-ում է, որ պետական իշխանության կոռուպցիայի մակարդակը 20 տոկոսից ցածր է, եւ միջին թիվը 13.5 տոկոս է: Ամենացածր կոռումպացված երկրների առաջին հնգյակում են Դանիան, Նորվեգիան, Մինգապուրը, Շվեդիան եւ Ֆինլանդիան: Այս երկրների շարքում է նաեւ Միացյալ Թագավորությունը /18%/:

Երկրորդ` թվով 14 երկրներում կոռուպցիայի միջին մակարդակը կազմում է 30.14 տոկոս: Այս խմբում է նաեւ ԱՄՆ-ը, որտեղ պետական իշխանության կոռուպցիայի մակարդակը կազմում է 27 տոկոս: Ֆրանսիայում այն 25 տոկոս է, Էստոնիայում` 22, Պորտուգալիայում` 28, Իսպանիայում` 31, Չեխիայում` 32, Լեհաստանում` 35, Սլովենիայում` 40 տոկոս եւ այլն:

Երրորդ` երրորդ խումբ երկրներում, որոնք թվով 11 են, կոռուպցիայի միջին մակարդակը 46.37 տոկոս է: Այս խմբում են նաեւ Իտալիան /41 տոկոս/, Հունաստանը, Խորվաթիան /46 տոկոս/, Ռումինիան /48 տոկոս/, Չինաստանը /49 տոկոս/ եւ այլն:

Չորրորդ` «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի շրջանակներում ընդգրկված 113 երկրներից 2017 թվականին 59-ում /52.2%/ պետական իշխանության մարմինների կոռումպացվածության աստիճանը հասել է 50 եւ ավելի տոկոսի: Ծրագրում ընդգրկված Արեւելյան Եվրոպայի ու մեր տարածաշրջանի երկրներից դրանց թվում են Հունգարիան, Թուրքիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը, Իրանը, Սերբիան, Բուլղարիան, Ալբանիան, Ուզբեկստանը, Ուկրաինան, Ղրղզստանը, Մոլդովան եւ այլն:

Հինգերորդ` եթե փորձում ենք այդ ծրագրի տեղեկատվության շրջանակներում գնահատել վերջին 5 տարիների դինամիկան, ապա մի շարք երկրների համար այն ունի հետևյալ պատկերը. ԱՄՆ-ում վերջին 5 տարում կոռուպցիայի մակարդակը բարձրացել է 5 տոկոսային կետով` 22-ից հասնելով 27 տոկոսի, Հունգարիայում այն բարձրացել է 21 տոկոսային կետով` 28-ից հասնելով 49 տոկոսի, Ռումինիայում եւ Մոլդովայում բարձրացել է 5 տոկոսային կետով, Թուրքիայում եւ Բուլղարիայում` 7 տոկոսային կետով եւ այլն:

Վեցերորդ` վիճակն ավելի վատթար է հասարակական տրանսֆորմացիա ապրող շատ երկրներում` հատկապես վերջին տասնամյակի տվյալներով, ինչն ակնհայտ երեւաց նաեւ «Ազատության տուն» կազմակերպության կողմից կատարված եւ այստեղ ներկայացված հետազոտության արդյունքներից:

Յոթերորդ` ըստ «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի` Նախկին ԽՍՀՄ պետություններից կոռուպցիայի առումով առավել վտանգավոր վիճակ է արձանագրվել Մոլդովայում, որտեղ այն գնահատվում է 72 տոկոս, Ղրղզստանում` 70 տոկոս, Ուկրաինայում եւ Ուզբեկստանում` 64 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում 59 տոկոս, Ղազախստանում` 55 տոկոս⁴:

⁴ Այս ծրագրով Հայաստանի վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Թեկուզ միայն այն փաստը, որ ուսումնասիրված երկրների ավելի քան **52** տոկոսում կոռուպցիայի մակարդակը **50** է ավելի տոկոս է, վկայում է ահագնացող չափերի հասնող սոցիալական մետաստազի ու հասարակական օրգանիզմի լրջագույն իմունային անբավարարության մասին, որի հաղթահարման ուղղությամբ իրականացվող քայլերը, մեր կարծիքով, համարժեք չեն վտանգի աստիճանին:

Նման պայմաններում սահմանադրական բոլոր հիմնարար արժեքները ձեռախեղվում են, մարդու իրավունքներն ու ազատությունները երկրորդ պլան են մղվում, անխուսափելի են դառնում սոցիալական կատակլիզմները:

Վերլուծելով իրավական, ժողովրդավարական պետության կայացմանը, իրավունքի գերակայության հաստատմանը խոչընդոտող նշված ու մի շարք այլ պատճառներ, հանգում ենք այն հետեւությանը, որ հասարակական տրանսֆորմացիա ապրող երկրներում եռամիասնության մեջ պետք է դիտարկել հանրային կյանքի բացասական դրսեւորումների հաղթահարման ու կայուն զարգացման խնդրի լուծումը:

Գտնում ենք, որ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի.

ա/ յուրաքանչյուր երկրում անձի սոցիալական ու իրավական վարքագծի հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը,

բ/ պետության քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը,

գ/ հանրային իշխանությունների հանրային վարքագծի հիմքում ընկած լինի իրավունքի գերակայությունը:

Այդ եռամիասնության հենքի վրա հանրային կյանքի սահմանադրականացման ու համարժեք սահմանադրական մշտադիտարկման համակարգի ներդրման ճանապարհով է հնարավոր հաղթահարել սահմանադրականության դեֆիցիտը եւ երաշխավորել կայուն զարգացում:

Այս հարցերի առնչությամբ դոկտրինալ մեր մոտեցումները ներկայացված են 2016 եւ 2017 թվականներին հրատարակված «Սահմանադրական մշտադիտարկում» ու «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները» մենագրություններում:

Այժմ Ձեր թույլտվությամբ կփորձեմ անդրադառնալ նաեւ Հայաստանյան կոնկրետ իրողություններին:

ՄԱՍ - II.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԵՐԸ ԵՐԿՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նոր ժողովրդավարության երկրներում ստեղծված ընդհանուր վիճակը որոշ առումով բնորոշ է նաև մեր երկրին: Այդուհանդերձ, Հայաստանը` Խորհրդային Միության փլուզումից ու 1988թ. ավերիչ երկրաշարժից հետո, գտնվելով առավել ծանր սոցիալական ու տնտեսական պայմաններում, կարողացավ խուսափել խոր սոցիալական ցնցումներից եւ ընթացավ հարաբերականորեն կայուն սահմանադրական զարգացումների ճանապարհով:

Սահմանադրական զարգացումները Հայաստանում կարելի է բաժանել չորս փուլի.

- 1. 1990-1995 թվականներ,**
- 2. 1995-2005 թվականներ,**
- 3. 2005-2015 թվականներ,**
- 4. 2015 թվականից հետո:**

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունն իր իրավական համակարգի ստեղծման առաջին քայլերն արեց 1990թ. օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված` Հայաստանի անկախության մասին հռչակագրով, որի համահեղինակներից եմ նաև ես:

Հայաստանը, Բալթյան երկրների հետ մեկտեղ, մինչև ԽՍՀՄ փլուզումը ձեռնամուխ եղավ անկախության գործընթացին:

Հռչակագրային նորմերը, մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը, իրենց հետագա որոշակիացումը գտան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրել է 1995թ. ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի հիման վրա): Սույն սահմանադրական օրենքով, ամրագրելով ՀՀ սահմանադրական կարգը՝ որպես անկախ ժողովրդավարական պետություն, հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճանաչման եւ ապահովման սկզբունքները:

Օրենքի հոդված 5-ն ամրագրեց, որ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության Նախագահն է, որը գլխավորում է ՀՀ գործադիր իշխանությունը եւ ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձեւավորման հիմքը դրեց եւ իրավական երաշխիք հանդիսացավ վերափոխելու խորհրդային օրենքներով ձեւավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին Գերագույն խորհուրդն էր՝ տարանջատելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները:

Անկախացումից 5 տարի հետո՝ 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Դրան նախորդել էին շուրջ չորս տարի տեւած բուռն քննարկումները, որոնք վերաբերում էին թե՛ պետության կառավարման ձեւին, թե՛ իշխանությունների բաժանմանն ու հավասարակշռմանը, դրանց լիազորություններին եւ թե՛ սահմանադրական կարգի հիմունքներին ու մարդու իրավունքներին առնչվող մի շարք սկզբունքային հարցերի:

Չնայած նոր Սահմանադրության շուրջ չհաջողվեց հասարակական համաձայնության այնպիսի մթնոլորտ ապահովել, ինչ Անկախության հռչակագրի պարագայում, ինչպես նաև հաղթահարել իրավամտաձողության խորհրդային ինտերցիան, այսուհանդերձ, կյանքը ցույց տվեց, որ ՀՀ Սահմանադրությունը վճռական դեր կատարեց երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու եւ մի շարք ճգնաժամային իրավիճակներից սահմանադրական ելքեր գտնելու հարցերում:

Սահմանադրական զարգացումների այս փուլում` 1996 թվականին ստեղծվեց Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Դատարանի գործունեությունը կարելի է բաժանել երեք փուլերի.

1. 1996-2005 թվականներ` սահմանափակ լիազորություններով, երբ ներդրված չէր նաև անհատական դիմումների ինստիտուտը,

2. 2005-2015 թվականներ, երբ սահմանադրական դատարան հիմնական դիմող սուբյեկտ դարձան քաղաքացիները,

3. 2015թ. սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ որակապես նոր մոտեցումներ ամրագրվեցին` թե' դատարանի կազմավորմաը եւ թե' լիազորություններին առնչվող հարցերում:

Սահմանադրական դատարանը ծանրակշիռ դեր ունեցավ մեր երկրում իրավական ու սահմանադրական զարգացումների, իրավունքի գերակայության հաստատման, սահմանադրական մշակույթի ամրապնդման, իրավական ճանապարհով քաղաքական հակամարտությունների հաղթահարման գործում:

Սահմանադրական դատարանի շուրջ մեկուկես հազար որոշումներից առանձնացնենք թեկուզ մի քանիսը եւ փորձենք այդ կոնկրետ օրինակներով ներկայացնել սահմանադրական արդարադատության պրակտիկան մեր երկրում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

/Ներկայացվում են որոշումների միայն եզրափակիչ մասերը՝ Ձեզ հետ միասին վերլուծելու համար/

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ **1995** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **27**-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ **22** ՀՈՂՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ, ՉՈՐՐՈՐԴ ԵՎ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ **8** ՀՈՂՎԱԾԻՆ ԵՎ **28** ՀՈՂՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **22** հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի «Հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի համարժեք փոխհատուցման չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ գրավոր համաձայնության վրա», համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածի երրորդ մասը, համաձայն որի «Եթե անշարժ գույքի սեփականատերը համաձայն չէ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գույքի օտարման կամ փոխհատուցման չափի հետ, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը անշարժ գույքի օտարումը կարող է իրականացնել միայն դատական կարգով», **չի համապատասխանում** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:

Անձի սեփականությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը եւ կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության եւ պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու:

Օրենքը միաժամանակ կառավարությանը կպարտավորեցնի, համապատասխան ֆինանսատնտեսական հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա սահմանել փոխհատուցման չափը, որը սեփականատիրոջ կողմից ենթակա է դատական վիճարկման:

3. «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածի չորրորդ մասը, համաձայն որի «Մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության եւ պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց», **չի համապատասխանում** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8, 28 եւ 44 հոդվածներին:

4. «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածի հինգերորդ մասը, համաձայն որի «Հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից», **չի համապատասխանում** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի կարող հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

27 փետրվարի 1998 թվականի

ՄԴՈ-92

**«ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 24 ՀՈՂՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. «Հեռահաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24 հոդվածը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5 եւ 8 հոդվածների պահանջներին այնքանով, որքանով որ պետական լիցենզավորման ենթակա, պետական կամ բնական մենաշնորհ հանդիսացող գործունեության տեսակների հստակեցումը, այդ ոլորտներում հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը եւ պետության ու հասարակության անվտանգու-թյան եւ օրինական շահերից, այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակ-ներից ելնելով տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ նախապես ոչ թե սահմանվել են օրենքով, այլ գործադիր իշխանության կողմից, իսկ օրենսդիրն անցումային դրույթների ձեւով օրենքի ուժ է հաղորդել կոնկրետ հասցեագրված պայմանների, որոնցում նաեւ տեղ են գտել ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ձեւակերպումներ:

Միաժամանակ,

նկատի ունենալով, որ «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածում հիշատակվող թիվ 60 լիցենզիայում նախատեսված եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից փաստորեն օրենքի աստիճանի բարձրացված առանձին դրույթներ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բնույթ են ստացել եւ որոնց չկատարումը երկրի համար հղի է որոշակի հետեւանքներով,

նկատի ունենալով նաեւ, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի հիման վրա «Օտարերկրյա ներդրումները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը»,

հաշվի առնելով, որ քննության առարկա 24 հոդվածի իրավաբանական ուժը կորցնելը օտարերկրյա ներդրողին տրված լիցենզիայի գործողության վրա անմիջական ազդեցություն չի կարող ունենալ,

գնահատելով ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ կառավարությունը պարտավոր են իրենց լիազորությունների շրջանակներում այդ ժամանակահատվածում գտնել օրենսդրական եւ իրավակիրառական այնպիսի լուծումներ, որոնք օրենքի մակարդակով կսահմանեն բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտների վերաբերյալ պետության քաղաքականությունը, կապահովեն քննության առարկա հոդվածի դրույթների համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրության պահանջներին, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունների՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան կատարումը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. 2003թ. ՀՀ նախագահական ընտրությունների ընթացքում առանձին ընտրատեղամասերում, հատկապես քվեարկության ել ձայների հաշվարկման ժամանակ, տեղ են գտել այնպիսի խախտումներ, որոնք իրենց բնույթով անհարիր են երկրի ժողովրդավարական հետագա զարգացումներին, անհամատեղելի են, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21 հոդվածով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի առաջին արձանագրության 3-րդ հոդվածով եւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25 հոդվածով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների հետ:

2. Հաշվի առնելով գործում առկա ապացուցողական նշանակություն ունեցող փաստերը, գործի քննության արդյունքները, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի դատական պրակտիկան՝ սահմանադրական դատարանում ընտրական վեճի քննության ընթացքում նման երեւույթների նկատմամբ մոտեցման չափանիշների հստակեցման տեսանկյունից անիմաստ համարել քվեարկությունից շաբաթներ անց ստուգումներ կազմակերպելը բոլոր այն ընտրատեղամասերում, որտեղ.

ա) նույն ընտրատեղամասում ի հայտ են եկել քվեարկության արդյունքների պաշտոնական բնույթ ունեցող, միմյանցից էապես տարբերվող ամփոփիչ արձանագրություններ,

բ) իրավական առումով հիմնավոր փաստարկված է, որ տեղ են գտել քվեաթերթիկների լցուման, ձայների սխալ հաշվարկի, այլոց փոխարեն քվեարկության եւ այլ բնույթի էական խախտումներ, սակայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից անհիմն ձեռով մերժվել է, իսկ ընդհանուր իրավասության դատարանների կողմից օրենքով սահմանված կարգով չեն պաշտպանվել հանձնաժողովների անդամների եւ թեկնածուների վստահված անձանց իրավունքները ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում տեղամասային քվեարկության արդյունքների ստուգումներ կազմակերպելու վերաբերյալ:

Նկատի ունենալով թեկնածուների ընտրվելու ու ընտրողների ազատ կամաարտահայտմամբ ընտրելու իրավունքի պաշտպանության սահմանադրական պահանջը, Ազգային ժողովի առաջիկա ընտրություններում եւ հետագայում նշված բնույթի ընտրախախտումների կանխման կարելությունը, ինչպես նաեւ ընտրությունների կազմակերպման ու անցկացման գործում ներգրավված մարմինների ու անձանց պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանում ընտրական վեճի լուծման ժամանակ թվարկված **ա) եւ բ) խմբերին դասվող բոլոր տեղամասերում քվեարկության արդյունքները համարել ոչ հավաստի:** Իսկ ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա քվեարկության ոչ հավաստի արդյունքների ազդեցությունը գնահատելու համար նման տեղամասերում առավել ձայներ ստացած թեկնածուի ձայների չափով կրճատել ընտրությունների արդյունքում թեկնածուներին տրված ձայների ընդհանուր տարբերությունը:

3. 2003 թվականի մարտի 5-ի ընտրության արդյունքներով ոչ հավաստի համարել թիվ 0018, 0444, 0502, 0507, 0508, 0515, 0521, 0538, 0550, 0553, 0748, 0779, 0842, 0865, 1000, 1011, 1065, 1340, 1341, 1361, 1524, 1784, 1262, 1263, 1264, 1266, 1268, 1270, 1253, 0989, 0990, 0736, 0702, 0369, 0363, 0352, 0346, 0347, 0220 եւ 0225 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները:

4. Նշված բոլոր տեղամասերում ընտրակեղծիքներ ու խախտումներ կատարած անձանց բացառապես եւ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար նյութերը տրամադրել ՀՀ գլխավոր դատախազությանը՝ կազմակերպելու համալիր քննություն եւ մինչեւ 2003թ. մայիսի 20-ը արդյունքների մասին տեղյակ պահել սահմանադրական դատարանին եւ հանրությանը: ՀՀ գլխավոր դատախազությանը տրամադրել նաեւ գործում առկա, քննության ընթացքում կեղծ որակված փաստաթղթերը՝ դրանց իսկությունը պարզելու, կեղծ լինելու դեպքում կազմողներին եւ շրջանառության մեջ դնողներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

5. Հաշվի առնելով 2003թ. մարտի 5-ի ընտրության արդյունքով Նախագահի թեկնածուների ստացած ձայների փաստացի տարբերությունը, դրա վրա անճշտությունների չափի եւ սահմանադրական դատարանի կողմից գործի քննությամբ ոչ հավաստի ճանաչված քվեարկության արդյունքների ազդեցությունը, գնահատելով նաեւ գործում առկա վերլուծական նյութերը, իրավաբանորեն պատշաճ ձեւակերպված, ապացուցողական նշանակության հիմքերով փաստարկված որակական բնույթ ունեցող ընտրախախտումների ազդեցությունն ընտրական ակտիվ ու պասսիվ իրավունքների իրացման վրա, անփոփոխ թողնել ՀՀ ԿԸՀ 2003թ. մարտի 11-ի թիվ 36-Ա որոշումը՝ ՀՀ Նախագահ ընտրվելու մասին:

6. Ելնելով այն իրողությունից, որ 2003թ. մայիսի 25-ին նշանակված են ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ եւ Սահմանադրության նոր խմբագրության ընդունման հանրաքվե, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած վճռական դեր ունի ժողովրդավարական ճանապարհով պետական իշխանության շարունակական զարգացումն ապահովելու գործում,

նկատի ունենալով, որ սահմանադրական լուծումների մակարդակով ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների համար էական նշանակություն ունի ոչ միայն դրանց կազմավորման օրինականությունը, այլեւ այդ գործընթացի ու պետական իշխանության մարմնի նկատմամբ հասարակության շարունակական լայն վստահությունը,

կարելորելով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի ամրապնդման եւ Սահմանադրության նախաբանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը,

փաստելով, որ սահմանադրական ժողովրդավարության դեռեւս անկատար համակարգի ներկա պայմաններում պետության ճակատագրի համար վճռորոշ նշանակություն ունեցող ընտրական վեճն ունի նաեւ անվստահության եւ անհանդուրժողականության վրա խարսխված խոր հասարակական-քաղաքական ենթատեքստ,

մեծ կարելորություն տալով հանրաքվեների եւ ժողովրդական հարցումների դերին՝ որպէս անմիջական ժողովրդավարության ու ժողովրդաիշխանության իրականացման, պետության համար հատուկ կարելորություն ունեցող հարցերի լուծման, հասարակական վստահության եւ ժողովրդական համաձայնության հաստատման առանձնահատուկ նշանակություն ունեցող ձեւ,

առաջարկել ՀՀ նորընտիր Ազգային ժողովին եւ ՀՀ Նախագահին՝ մեկ տարվա ընթացքում «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ժողովրդավարության եւ իրավական պետության սկզբունքներին համահունչ համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 2-րդ փոփոխման ոչ ենթակա, հողվածի առաջին մասի պահանջներին եւ որպէս նախագահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմակայության հաղթահարման արդյունավետ միջոց ընտրել վստահության հանրաքվեի կազմակերպումը:

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 218 ՀՈԴՎԱԾԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 104, 106 ԵՎ 108 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1151-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 31 ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով **չի համապատասխանում** ՀՀ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին:

2. ՀՀ հողային օրենսգրքի՝

ա) 104 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով **չի համապատասխանում** ՀՀ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին,

բ) 106 հոդվածը **չի համապատասխանում** ՀՀ Սահմանադրության 31 (3-րդ մաս), 43 եւ 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին,

գ) 108 հոդվածը **չի համապատասխանում** ՀՀ Սահմանադրության 3, 31 (3-րդ մաս) եւ 43 հոդվածների պահանջներին:

3. ՀՀ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն որոշումը՝ «Երեւանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 եւ ՀՀ հողային օրենսգրքի 104 հոդվածների դրույթները, հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կարգավորման առումով **չի համապատասխանում** ՀՀ Սահմանադրության 3 , 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43, 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր), 85 (2-րդ մաս) հոդվածների պահանջներին:

4. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու **վերջնական ժամկետ սահմանել** օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

18 ապրիլի 2006 թվականի

ՄԴՈ-630

**ՔԱՂ. Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՔԱՂ. Հ. ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11 ՀՈԴՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**.

1. «Մոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) եւ 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին **հակասող եւ անվավեր:**

2. «Սահմանադրական դատարանի մասի» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի եւ 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը **տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:**

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4 հոկտեմբերի 2006 թվականի

ՍԴՈ-649

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԵՎՈՐԳ ԳԶՐԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 311 ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 414.2. ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի վերաբերյալ Գ. Գրարյանի դիմումի մասով գործի վարույթը կարճել:
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր:
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) **հակասող եւ անվավեր** ճանաչել նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաեւ 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419 հոդվածի 2-րդ կետի **լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:**
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

24 հուլիսի 2007 թվականի

ՍԴՈ-710

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ԳՅՈԶԱԼՅԱՆԻ, ԽԱԶԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆԻ,
ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՀՐԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ, ՄԱՐԻԵՏՏԱ ԵՎ ՄԱՂԼԵՆԱ
ԲԱԲԱԼՅԱՆՆԵՐԻ, ՀԱԿՈԲ ՌԱՖՅԱՆԻ, ՀԱՅԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ **223**
ՀՈՂՎԱԾԻ **1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231** ՀՈՂՎԱԾԻ **2-ՐԴ ՄԱՍԻ, 233** ՀՈՂՎԱԾԻ **1-ԻՆ ՄԱՍԻ 3-6-**
ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 29.1.
ՀՈՂՎԱԾԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ **404** ՀՈՂՎԱԾԻ **1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ**
ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ (28.11.2007թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ 404 ՀՈՂՎԱԾԻ **1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ)** ԵՎ ՀՀ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ **13** ՀՈՂՎԱԾԻ **6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 233 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՍԴՈ-754 որոշումը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իրավական որոշակիություն է ձեռք բերում միայն օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակցության մեջ:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասը, 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 231 հոդվածի 2-րդ մասը՝ հավատարմագրված փաստաբանի ինստիտուտին առնչվող մասով, 233 հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճարել բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին **հակասող եւ անվավեր:**

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 28.11.2007թ. խմբագրությամբ, հավատարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերելու մասով, 426.2 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավատարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած հանգամանքների մասին հայտարարությունները եւ հաղորդումները հավատարմագրված փաստաբանին ուղարկելուն (1-ին մաս), ինչպես նաեւ նոր երեւան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու եւ ուսումնասիրություններ կատարելու խնդրում հավատարմագրված փաստաբանի իրավունքի մասով (4-րդ մաս), 426.6 հոդվածը՝ հավատարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով (2-րդ եւ 3-րդ մասեր), ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին **հակասող եւ անվավեր:**

4. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին **հակասող եւ անվավեր:**

5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

6. ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

7. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի **ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008** թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեռով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

8 հոկտեմբերի 2008 թվականի

ՍԴՈ- 765

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
5, 7, 8, 37, 38, 45, 49 ԵՎ 86-ՐԴ ՀՈՐՎԱԾՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին եւ 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքը եւ հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 եւ 43-րդ հոդվածների պահանջներին **հակասող եւ անվավեր:**

2. Իրավունքի գերակայության եւ իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու եւ տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հանգամանքից ելնելով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին **հակասող եւ անվավեր:**

3. Վեճի առարկա հողվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...որի տնօրինման ... կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթը եւ 44-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին **հակասող եւ անվավեր**:

4. Վեճի առարկա հողվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին **հակասող եւ անվավեր**:

5. Վեճի առարկա հողվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքի արգելանքի միջոցով վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը սահմանափակող դրույթը գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման սահմանափակման միջոցով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 եւ 43-րդ հոդվածների պահանջներին **հակասող եւ անվավեր**՝ հաշվի առնելով նաեւ, որ տվյալ դրույթին առնչվող իրավահարաբերությունները չեն վերաբերում քննության առարկա օրենքի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի /հարկային գործակալի/ անմիջական հարկային պարտավորությունների կատարմանը:

6. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել եւ կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:

7. Հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով եւ ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաեւ նկատի ունենալով օրենքի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել **2014 թվականի սեպտեմբերի 30-ը**

հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

Սույն որոշման պահանջներից բխող նոր իրավակարգավորումներից ելնելով եւ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ վերահաշվարկման են ենթակա մինչ այդ կատարված կուտակային վճարները:

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2 ապրիլի 2014 թվականի
ՍԴՈ-1142

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես նշեցի, Սահմանադրության ընդունումից հետո առաջին բարեփոխումները տեղի ունեցան 2005 թվականին: Դրանք իմ մենագրություններում եւ հոդվածներում բնութագրել եմ որպես կիսալուծումներ: Միայն նշեմ, որ հիմնական դրական քայլերը կարելի է համարել.

1. Պառլամենտը ցրելու վերաբերյալ Նախագահի գրեթե բացարձակ հայեցողության վերացումը,
2. կառավարության հարաբերական անկախության ամրապնդումը,
3. քաղաքացիներին Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն վերապահելը:

Ինչու՞ անհրաժեշտություն առաջացավ 2015 թվականին լուրջ փոփոխություններ կատարել երկրի Հիմնական օրենքում:

1. Անհրաժեշտ էր երաշխավորել սահմանադրական զարգացումների բոլոր հնարավորությունների արդյունավետ իրացումը՝ անընդհատ չդիմելով «վիրահատական» միջամտությունների, որոնք քաղաքական հակամարտությունների խորացման պատճառ էին դառնում:

2. Մեթոդաբանական առումով անհրաժեշտ էր հետեւողական անցում կատարել իշխանակենտրոն սահմանադրական լուծումների համակարգից մարդակենտրոն համակարգի, ինչը չհաջողվեց լիարժեք իրականացնել 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

Դա, իր հերթին, ենթադրում է իրավունքի գերակայության սկզբունքի իրացման սահմանադրաիրավական անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծում, ինչն անհրաժեշտաբար պահանջում է.

- համակարգային ամբողջականության մեջ հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորում, դրանց ապահովման ու պաշտպանության սահմանադրական հիմքերի ամրապնդում, այս հարցում հանրային իշխանության պոզիտիվ պարտականության եւ հանրային-իրավական պատասխանատվության հստակեցում,

- իշխանության հայեցողության սահմանափակում իրավունքով:

3. Պահանջվում էր համակարգային ամբողջականության մեջ առավել հետևողական իրացնել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքը, **երաշխավորել գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի ներդաշնակությունը, իշխանության մարմինների գործառութային, հակակշռող եւ զսպող լիազորությունների հաշվեկշռվածությունը, ամրապնդել իշխանության տարբեր ճյուղերի պատշաճ գործունակությունը և գործառութային անկախությունը:** Սահմանադրական անհրաժեշտ նախադրյալներ պետք էր ստեղծել պետաիշխանական լիազորությունների իրականացման գործում սովերային հարաբերությունների ու սուբյեկտիվիզմի դրսևորումների հաղթահարման, պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվության համար:

4. Անհրաժեշտ էր ապահովել Սահմանադրության 2-րդ՝ անփոփոխելի հոդվածի պահանջների հետևողական իրացումը, բացառել Սահմանադրությամբ չնախատեսված պետական մարմինների միջոցով պետաիշխանական գործառույթների իրականացումը:

5. Սահմանադրորեն հաղթահարված չէին Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի գերանձնավորվածությունն ու գերկենտրոնացվածությունը: Ակնհայտ անհամամասնություն կար սահմանադրական տարբեր մարմինների լիազորությունների իրական ծավալի եւ նրանց քաղաքական պատասխանատվության միջեւ:

6. Անկատար էին գործադիր իշխանության համակարգի սահմանադրական հիմքերը, այն չունեին ներքին կուռ տրամաբանություն, գործառույթների ու լիազորությունների հստակ սահմանազատում: Օրակարգային հրատապ հարց էր առկա անհստակության եւ երկվության հաղթահարումը գործադիր իշխանության գործառութային դերի, իրավասության եւ պատասխանատվության միջեւ:

7. Պառլամենտարիզմի ներկա պահանջներին համապատասխան անհրաժեշտ մակարդակի պետք էր բարձրացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի դերը` արդյունավետ օրենսդրական գործունեության, վերահսկողական առաքելության, ինչպես նաեւ պետական իշխանության եւ կառավարման մարմինների ձեւավորման գործում` միաժամանակ սահմանադրական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ ստեղծելով խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության եւ հակակշռող դերի ամրապնդման հարցերում:

8. Ընտրական համակարգի և հանրաքվեի ինստիտուտի բարեփոխման արդյունքում պետք էր երաշխավորել իշխանության ընտրովիության, հաշվետվողականության եւ փոփոխելիության ժողովրդավարական գործընթացների անխափանությունը, քաղաքացիական հասարակության ակտիվ դերակատարությունն իշխանության գործունեության նկատմամբ համարժեք հանրային վերահսկողություն իրականացնելու հարցերում:

9. Հանրային պատշաճ վստահություն ունեցող արդարադատական համակարգի ձեւավորման հետ մեկտեղ, իրավական պետության չափորոշիչներին համապատասխան սահմանադրորեն պետք էր երաշխավորել դատական իշխանության հակակշռող դերի էական ամրապնդումն իշխանության այլ ճյուղերի առնչությամբ: Սահմանադրական մակարդակում դատական իշխանության մարմինների գործառութային անհստակությունները, կառուցակարգային լուծումների ու դատավարական ընթացակարգերի անկատարությունը բացասական լուրջ ազդեցություն էին ունենում հատկապես դատական իշխանության գործառութային անկախությունը երաշխավորելու գործում:

10. Պետք էր սկզբունքորեն հաղթահարել Սահմանադրության եւ իրական կյանքի միջեւ առկա անջրպետը, սահմանադրականության ու հասարակական հարաբերությունների սահմանադրականացման ճանապարհով պետք է գտնվեին քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ այլ բնույթի հիմնախնդիրների լուծման իրավական երաշխիքներ: **Պետք է բացառվեր քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճումը**, երաշխավորված ու ապահովված պետք է լիներ քաղաքական ուժերի նպատակների ու գործունեության սահմանադրականությունը: Սահմանադրական մակարդակով պետք է կարելուվեր անձի սոցիալական վարքագծի, ինչպես նաեւ իշխանության քաղաքական ու հանրային վարքագծի սահմանադրականացումը, եւ դրանց հիմքում պետք է ընկած լիներ իրավունքի գերակայության սկզբունքը:

11. Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտ հետեւություններ պետք է աներ՝ նաեւ հաշվի առնելով նախկին ԽՍՀՄ երկրների սահմանադրական զարգացումների փորձը: Բացի Բալթյան երկրներից /Էստոնիա եւ Լատվիա/ եւ Մոլդովայից, մնացած պետությունները, այդ թվում՝ Հայաստանը, որդեգրեցին եւ հետագայում պահպանեցին կիսանախագահական կամ նախագահական կառավարման համակարգը: Դրանցից չորսում նույն անձինք նախագահում էին ավելի քան 20 տարի, երկուսում ձեւավորվել է, այսպես կոչված, ժառանգական միապետություն: Երեք երկրներ /Ուկրաինա, Վրաստան, Ղրղզստան/ առավել հետեւողական գտնվեցին կիսանախագահական կառավարման համակարգի սահմանադրական լուծումների իրացման, դրանց բարեփոխումների հարցում: Մակայն դրանցում, այդուհանդերձ, տեղի ունեցան, այսպես կոչված, «գունավոր հեղափոխություններ», իսկ սահմանադրական զարգացումներն ուղղորդվեցին կառավարման խորհրդարանական համակարգի արմատավորմանը:

Հայաստանի Հանրապետությունը կանգնած էր լուրջ ընտրության առջեւ՝ քաղաքական փոխհամաձայնությամբ ու բարեփոխումների միջոցով երաշխավորել երկրի կայուն զարգացումը կամ գնալ նշված երկրների ճանապարհով՝ լրջորեն վտանգված հեռանկարով:

Բարեբախտաբար, ընտրվեց առաջին տարբերակը, եւ այսօր մենք գտնվում ենք սահմանադրական այդ բարեփոխումները կյանքի կոչելու փուլում: Դրանց բնույթին ու առանձնահատկություններին, թերեւս, կանդրադառնանք առանձին զեկույցով:

Շնորհակալություն ուշադրության համար:

URL: www.concourt.am
E-mail: armlaw@concourt.am

